ՆԱԶԱՐԵԱՆՑ, սարկաւագ Յովհաննէս։— «Օրացոյց» 1892 Նահանջ թուականին Քրիստոսի և Հայկայ ՏՁԲԴ—4384 թ.։ Հինգերորդ տարի։ Թիֆլ., ապ. Մարտիրոսեանցի, 16-ածալ, 224 երես. գինն է 20 կ.։

Սարկաւագ Յ. Նազարեանցի Օրացոյցը մեր տեղական բոլոր օրացոյցների մէջ ամենից աչքի է ընկնում իւր բովանդակութեան ճոխութիւնով։ Նորա լաւելուածը բռնում է 172 երես մանր տպուած և պարունակում է առօրեայ կեանքին պիտանի բազմաթիւ նիւթեր, որոնց մի առ մի թուելը աւելորդ ենք համարում։ Դոցա մէջ սակայն աչքի է ընկնում երրորդ դլուխը, խորագրած՝ «Դատաստանական», որը մի քաղուածք է ռուսաց դատարանական օրէնսդրքից՝ վերաբերեալ քաղաքացիական դատավարութեան ալ և ալ պարագաներին։ Մեծ տեղ է բռնում նաև Առողջապահական մասը մանկական հասակի վերաբերեալ, որի հեղինակն է բժշկ. Բայց Նազարեանը սխալ է գործել որ Տաճկահայերի ստատիկան տաճկական աղբիւրներից ուղղակի վերցրել է։ Դ. Տէր-Գրիգորեանց (Թիֆլիսեցի). Երեք տարի առաջ մենք խորհուրդ էինք տուել Օրացոյցի ծաւալը մեծացնել, որպէս զի ամեն տարուայ նոր օրացոյցը կցի նախորդ տարիների հրատարակութիւնների հետ և այդպիսով հին լաւելուածները չը կորչեն գնողների համար, քանի որ սարկաւագ Նազ. օրացոյցի լաւելուածների մեծ մասը սեռական նշանակութիւն ունի։ Այնպէս, ինչպէս այժմեայ փոքրիկ օրացոյցներն են հրատարակում— լաւելուածները կորչում են յաջորդ տարիներում, այնպէս որ նոր հրատարակութեան մէջ կազմողները ստիպուած են լինում անհրաժեշտ տեղն կութիւնները մեծ մասամբ անփոփոխ կերպով նորից տպել և այդպիսով տեղ խլել նոր տեղեկութիւնների համար։ Օրինակ հէնց այս անգամում կայ մի բաւականին ընդարձակ բաժին դատարանական գործավարութեան վերաբերեալ. բայց անկասկած 1893 թուականի համար կազմած օրացոյցում այդ նիւթի տեղ՝ կազմողը մի ուրիշ նիւթ է տպելու. բայց մի թէ դատարանական գործավարութեան ձեն իմանալը 1892 թուականին աւելի է հարկաւոր քան 1893 թուականին։ Ահա ինչու մեր օրացոյցները, նոյն իսկ նոցա մէջ լաւագոյնները, ամեն տարի նոր հրատարակութեամբ են լոյս տեսնում, նոր նիւթեր էլ են տալիս, բայց չեն լառաջադիմում, որովհետև հինը, որ նոյնքան հարկաւոր է, կորուստի է մատնուում։ Կամ պէտք է կարեորութիւն ունեցող նիւթերի մասին լօդուածները միանգամից շատ հապարներով տպեն և մինչև սպառուելը, կամ նիւթի հնանալը ամեն տարուայ օրացոյցի լաւելուածին կցեն, իբր երկրորդ լաւելուած։

Ն.